

ՀԱՅԿԱՆ ԲԱՆԱԿ



ԱԻԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀԱԻԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

4(18)•1998



**ՀԱՆԻՍ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ВО ИМЯ НЕЗАВИСИМОСТИ, ГОСУДАРСТВЕННОСТИ, БЕЗОПАСНОСТИ
IN FAVOR OF INDEPENDENCE, STATE ORGANIZATION AND SECURITY**



Հայաստանի Հանրապետության դեկավարները
Եղարշուրում Հաղթական կամարի բացմանը. Երևան, 1998 թ. սեպտեմբերի 21

Руководители Республики Армения
на открытии Триумфальной арки в Ераблуре. Ереван, 21 сентября 1998 г.

The leaders of the Republic of Armenia
at the opening ceremony of Triumphal Arch on Erabur. Yerevan, 21 September, 1998



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՍՉՈՒԳԻՒԹՅԱՆ ՀԱՆՈԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից
տարին չորս անգամ

4(18).1998

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն
Վ Ո Լ Ե Գ Ի Ա

Շիրխանյան Վ. Գ.
(նախագահ)

Սարգսյան Ա. Ե.
(զիսավոր խմբագիր)

Արքահամյան Մ. Ա.

Գասպարյան Վ. Ս.

Գևորգյան Է. Ա.

Գորդիենկո Ի. Վ.

Զինեկիլ Ա. Վ.

Խորիստրուճի Վ. Վ.

Կարապետյան Լ. Ս.

Համբարձումյան Գ. Ա.

Հայրապետյան Վ. Ա.

Հարուրյունյան Ա. Թ.

Հարուրյունյան Գ. Բ.

Հարուրյունյան Մ. Հ.

Հարուրյունյան Վ. Վ.

Մարտիրոսով Լ. Ա.

Միհրանյան Է. Գ.

Պայան Հ. Ա.

Պետրոսյան Ա. Ա.

Պետրոսյան Գ. Լ.

Սարգսյան Ա. Գ.

Սարգսյան Մ. Ա.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տեր-Մաղևսով Ա. Ի.

Քորանջյան Հ. Ա.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ո Ա Զ Մ Ա Վ Ա Ն Պ Ա Տ Մ Թ Յ Ո Ւ Ն

| | |
|---|----|
| <i>Ա. Ա. Հակոբյան, Պաշտպանության և բանակի խնդիրները Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանում (1918—1920 թթ.)</i> | 5 |
| <i>Վ. Ա. Մուրադյան, Գարեգին Նժդեհը և Հայկական հարցը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին</i> | 16 |

Ո Ա Զ Մ Ա Վ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Վ Ա Ն Պ Ա Տ Մ Թ Յ Ո Ւ Ն

| | |
|--|----|
| <i>Ն. Ի. Տուրկո, Ա. Ա. Մողեստով, Ժամանակակից աշխարհադարականության մեխանիզմները</i> | 33 |
|--|----|

Մ Ա Ր Տ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն. Զ Ո Ր Ք Ե Ր Ի Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Ա Վ Տ Ո Մ Ա Ց Վ Ա Ծ Հ Ա Վ Մ Ա Ր Գ Ե Ր

| | |
|--|----|
| <i>Վ. Կ. Բորտյան, Ռազմական գործում օպտիմալացման տեսության կիրառելիության հսկող շուրջ</i> | 54 |
|--|----|

Ո Ա Զ Մ Ա Վ Ա Ր Տ Ա Ր Ա Վ Ա Ծ Ա Կ Ա Ծ Ն Հ Ո Գ Ե Բ Ա Ն Պ Ա Տ Մ Թ Յ Ո Ւ Ն

| | |
|--|----|
| <i>Վ. Հ. Մարգարյան, Ռենալ երթևեկության պայմաններում ստրես-գործունի առկայությամբ վարորդի հակադրման ժամանակի չափումը</i> | 62 |
|--|----|

Հ Ա Կ Ա Հ Ե Տ Ա Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

| | |
|--|----|
| <i>Ա. Ե. Սարգսյան, Գիտատեխնիկական հակահետախուզություն և ապատեղեկատվություն</i> | 70 |
|--|----|

Ո Ա Զ Մ Ա Վ Ա Տ Ա Վ Ա Ն Տ Ե Ր Մ Ի Ա Բ Ա Ն Պ Ա Տ Մ Թ Յ Ո Ւ Ն

| | |
|--|----|
| <i>Վ. Խ. Բարդասարյան, Համարի բառարան</i> | 82 |
|--|----|

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
N 4 (18), 1998
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

В. Г. Ширханян (председатель); А. Е. Саркисян (главный редактор);
М. А. Абрамян; В. А. Айрапетян; Г. С. Амбарцумян; А. Т. Арутюнян;
В. В. Арутюнян; Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; В. С. Гаспарян; Э. С. Геворгян;
И. В. Гордиенко; А. В. Зиневич; А. С. Карапетян; Г. С. Команджян; Л. А. Мартirosов;
Э. Г. Милитонян; О. С. Палян; А. А. Петросян; Г. Л. Петросян; А. Г. Саркисян;
М. С. Саркисян; Н. Г. Тер-Григорьянц; А. И. Тер-Татевосов; В. В. Хорхоруни.

НАУЧНОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ И РЕДАКТИРОВАНИЕ

генерал-лейтенант М. А. Абрамян; подполковник, д. мед. н., профессор Б. Н. Арутюнян;
генерал-лейтенант В. В. Арутюнян; лейтенант, к. филос. н., доцент С. Г. Арутюнян;
к. филос. н., доцент В. Х. Багдасарян; подполковник, д. ист. н., профессор Б. П. Балаян;
полковник, д. полит. наук, академик Российской Академии военных наук Г. С. Команджян;
генерал-майор Л. А. Мартirosов; генерал-майор С. С. Мартirosян;
гвардии подполковник в отставке, д. ист. н., засл. деят. науки РА В. А. Мурадян;
подполковник, д. тех. н., академик Российской Академии военных наук А. Е. Саркисян;
генерал-лейтенант Н. Г. Тер-Григорьянц.

СОДЕРЖАНИЕ

ВОЕННАЯ ИСТОРИЯ

| | |
|---|---------|
| А. М. Акопян. Проблемы армии и обороны в парламенте первой Республики Армения | 5 (28)* |
| В. А. Мурадян. Гарегин Нжде и армянский вопрос в годы второй мировой войны | 16 (29) |

ВОЕННАЯ ПОЛИТИКА

| | |
|--|---------|
| Н. И. Турко, С. А. Модестов. Механизмы современной геополитики | 33 (42) |
|--|---------|

**ТАКТИКА. АВТОМАТИЗИРОВАННЫЕ СИСТЕМЫ
УПРАВЛЕНИЯ ВОЙСКАМИ**

| | |
|--|---------|
| В. К. Брутян. К вопросу о применимости теории оптимизации в военном деле | 52 (60) |
|--|---------|

ВОЕННО-ИНЖЕНЕРНАЯ ПСИХОЛОГИЯ

| | |
|--|---------|
| В. Г. Маргарян. Измерение времени реакции водителя в реальных условиях движения при наличии стресс-фактора | 62 (68) |
|--|---------|

КОНТРАЗВЕДКА

| | |
|---|---------|
| А. Е. Саркисян. Науко-техническая контрразведка и дезинформация | 70 (79) |
|---|---------|

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

| | |
|--|----|
| В. Х. Багдасарян. Словарь номера | 82 |
|--|----|

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

MILITARY-SCIENTIFIC QUARTERLY
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 4 (18), 1998

EDITORIAL BOARD

V. G. Shirkhanian (Chairman), A. E. Sarkissian (Editor-in-Chief),
M. A. Abrahamian, V. S. Gasparian, E. S. Gevorgian, I. V. Gordienko, V. A. Hairapetian,
G. S. Hambartsoumian, A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian,
V. V. Haroutunian, L. S. Karapetian, V. V. Khorkhoruny, H. S. Kotanjian, E. G. Militonian,
L. A. Martirossov, H. S. Palian; A. A. Petrossian, G. L. Petrossian, A. G. Sarkissian, M. S. Sarkissian,
N. G. Ter-Grigorian, A. I. Ter-Tatevossov, A. V. Zinevich.

SCIENTIFIC CONSULTING AND EDITTING

M. A. Abrahamian, Major-General; V. Kh. Baghdassarian, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
B. P. Balyan, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.; B. N. Haroutunian, Lieutenant-Colonel,
Prof., Dr. of Medicine; S. H. Haroutunian, Lieutenant, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
V. V. Haroutunian, Lieutenant-General; H. S. Kotanjian, Colonel, Dr. of Polit. Sc., Academician of
Russian Military Sciences Academy; S. S. Martirosian, Major-General; L. A. Martirossov,
Major-General; V. A. Mouradian, Guards Lieutenant-Colonel (Ret.), Dr. of Hist. Sc.,
Honorary Scientist of RA; A. E. Sarkissian, Lieutenant-Colonel, Dr. of Tech. Sc., Academician of
Russian Military Sciences Academy; N. G. Ter-Grigorian, Lieutenant-General.

CONTENT

MILITARY HISTORY

| | |
|---|---------|
| A. M. Hakopyan. Problems of army and defense in parliament of the first republic of Armenia (1918—1920) | 5 (30)* |
| V. A. Mouradian. Garegin Nzhdeh and armenian question in years of Second World War | 16 (31) |

MILITARY POLICY

| | |
|---|---------|
| N. I. Turko, S. A. Modestov. Modern mechanisms of geopolity | 33 (52) |
|---|---------|

TACTICS. AUTOMATED CONTROL SYSTEMS OF FORCES

| | |
|---|---------|
| V. E. Brutyany. To a question on applicability of the theory of optimization in military business | 52 (61) |
|---|---------|

MILITARY-ENGINEERING PSYCHOLOGY

| | |
|--|---------|
| V. G. Margaryan. Measurement of time of reaction of the driver in real conditions of a movement at presence of the stress-factor | 62 (69) |
|--|---------|

COUNTER-INTELLIGENCE

| | |
|---|---------|
| A. E. Sargisyan. Scientific and technical counter-intelligence and misinformation | 70 (80) |
|---|---------|

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

| | |
|--|----|
| V. Kh. Bagdassarian. Volume dictionary | 82 |
|--|----|

* Numbers in brackets mean page of text in English.

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

Յոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու իմսութերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ռուսերեն ամփոփումը մինչև 2 էջ ծավալով:

Յեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Յեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գողտնիության պահանջմանը պահպանման համար:

Յեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Զեռագրերը հետև չեն վերադարձվում:

Յոդվածների պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամանագիտական հապավումները:

К сведению авторов и читателей

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

Рукописи не возвращаются.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

For the information of the authors and readers

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be double spaced and should not exceed 15 pages in length. Provide Russian summaries (2 page maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinion expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, and photos should be of print quality.

Manuscripts are not returned.

Please explain acronyms.

ՌԱԶՍԱԿԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ
(1918—1920 թվ.)

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սույն հոդվածը նվիրված է այն խնդրին, թե Հայաստանի առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, ինչ վերաբերունք է դրսուրեկ հանրապետության պաշտպանության ու բանակի պրոբլեմների նկատմամբ։ Այս գործում կուտակված փորձի վերհանումն ու ուսումնասիրումը անշուշտ որոշակի գիտագրոժնական նշանակություն ունեն ներկայիս հանրապետության պաշտպանության և բանակի կառուցման ուսպնավարության մշակման համար։ Հետո մենք գտնվում ենք գրեթե նույն աշխարհաբարձրական պայմաններում, ուստի են մեր հարեանները, գրեթե նույն են աշխարհի հզորները, փոփոխ են միայն ժամանակները և կոնկրետ իրադրությունը։

Հայաստանի առաջին հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում կազմվել է երկու գումարման խորհրդարան։ Առաջինը՝ որպես Հայոց Ազգային խորհրդի անմիջական իրավահաջորդ, կոչվել է Հայաստանի խորհրդություն։ Այս կազմին է բաղկացած ակտական ընկերություն, առև ուղ ընտրությունների, ունեցել է ընդունելու 46 պատգամանիր և գործել է 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը։ Երկրորդը, որը գործել է 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, կազմվել է համամատնական ընտրությունների միջոցով և ունեցել է ընդամենը 80 պատգամափոր, որոնցից 72-ը դաշնակցության անդամներ էին։ Մեր կողմից արծարծվող հարցերի խորհրդարանական ըննարկումների մասին լավ պատկերացում կատարվել է համար նախ հարկ ենք համա-

րում ցույց տալ բաղարական ուժերի դասավորությունը խորհրդարանում։

Առաջին խորհրդարանում գործել են չորս կուսակցական խմբակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՀԴ)՝ 18 պատգամափոր, Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ)՝ 6, սոցիալ-դեմոկրատական՝ 6, որոնցից 5-ը մենչնիկ և 1-ը՝ բոլշևիկ, հեղափոխական սոցիալիստների (Էսեռներ)՝ 6, ինչպես նաև 2 անկուսակցական։ Խորհրդի պատգամափոր էին նաև 6 թուրք, մեկ ոռու և մեկ բուրդ (նպդի), որոնք խմբակցություններ չեն կազմում, այլ պարզապես ազգային խմբերի ներկայացուցիչներ էին։ Թվարկված կուսակցություններից ՀՀԴ-ն սկզբից մինչև վերջ նենք է Հայաստանի Հանրապետության հիմնական կառավարող կուսակցությունը։

Խորհրդարանում գործող կուսակցական խմբակցությունները կարող են բաժանել երկու խմբի՝ ազգային և ոչ ազգային, և երեք ուղղության՝ «աջակողմյան», «կենտրոնավայրկու» և «ձախակողմյան»։ Այս տեսակներից ՀՀԴ-ն և ՀԺԿ-ն դասվում էին ազգային, իսկ սոցիալ-դեմոկրատները (մենչնիկ ու բոլշևիկ) և էսեռները՝ ոչ ազգային կուսակցությունների խմբին։ Հայոց գաղափարաբարական ուղղվածության, ծրագրային հիմնադրությունների և դրանուած վարքագծի ՀԺԿ-ն կազմում էր «աջակողմյան», սոցիալ-դեմոկրատները և էսեռները՝ «ձախակողմյան» թերեր, իսկ ՀՀԴ-ն գրավում էր «կենտրոնավայրկու» դիրքը։ «Զախուրովյան» կուսակցություններին բնորոշ էր դասակարգային աշխարհայացքը, իսկ «աջակողմյանին» ու «կենտրոնամենին»

ապգային գաղափարախոսությունը: Վերոհիշյալ չորս խմբակցություններից երեքը (ՀԺԿ, սոցիալ-դեմոկրատներ և էսեռներ) մկրտից ներ գրավեցին ընդդիմադիր դիրք:

Քաղաքական ուժերի դասավորության միանգամայն այլ վիճակ ու հարա-

յան տնտեսական ու քաղաքական հզորացմանը:

Հանրապետությունում օրինականությունը վերականգնելու և կարգուկանոն հաստատելու նպատակով Խորհրդի առաջին նիստերից մեկում ներքին գործերի նախարար Արամ Մանուկ-



Առաջին հանրապետության խորհրդարանի շենքը. Երևան
(Հայկական հանրապետուրանի խմբագրության ֆոտոյից)

բերակցություն էր տիրում երկրորդ գումարման խորհրդարանում, որում 72 պատգամավորանոց ՀՀԴ հայր խմբակցությանը դիմակայում էին շատ քուլ՝ ընդամենը չորս պատգամավորից կազմը, էսեռական խմբակցությունը, ինչպես նաև երեք մահմեդական և մեկ անկուսակցական պատգամավորներ:

Ամենից առաջ նշենք, որ ինչպես Հայաստանի կառավարությունը, այնպես էլ խորհրդարանը իրենց նյութական ու մարդկային, ֆինանսական ու տնտեսական ներուժին համապատասխան բավականաշափ ուշադրություն էին դարձնում հանրապետության պաշտպանության ու քանակի հարցերին: Հայկական առանձին կորպուսի հիմքի վրա ստեղծված ՀՀ բանակի գորացումը ուղղի համեմատական էր հանրապետությ-

յանի (Արամ) ներկայացմամբ քննության առնվեց «Անօրինական զենք կրող» ների վիճաթափման, մասնավոր զենքերի ու վիճամթերքների առգրավման ու պետականացման մասին» օրինագիծը: Հիմնավորելով այս օրինագիծի հրատապությունը՝ Արամը տեղեկացնում էր, որ հանրապետությունում հաշվվում է 60 հազարից մինչև 150 հազար միավոր հրապեն¹: Կառավարությունը հույս ուներ ապօրինի պահպող զենքի առգրավմամբ, մի կողմից, ամրապնդելու երկրի ներքին կայունությունը, իսկ մյուս կողմից՝ վիճելու նորաստեղծ հայկական բանակը: Ժողովրդի վիճաթափման հետ միաժամանակ երկրի ներսում կարգուկանոնը պետք է պահպաներ ուժեղացված կազմով միլիշիան, իսկ պետական սահման-

¹ Տես «Ժողովուրդ», 1918 թ. օգոստոսի 29:

ները պետք է հուսալիորեն պաշտպաները վորքը²: Նախարարության ներկայացրած օրինագիծը հոդված առ հոդված ըննարկվեց խորհրդարանում: Բնակչության ու նեցած զենքի առգրավման ու պետականացման խնդիրը առաջարկեց տարակարծություններ ու վեճեր: Ներկայացված օրինագիծին կտրականացնելու արտահայտվեցին սոցիալ-դեմոկրատները, մասամբ և ժողովրդականները³: Այսպիսի բոլշևիկ պատգամավոր Ա. Մելիքյանն այն կարծիքն էր հայտնում, որ «ամեն քաղաքացի իրավունք ունի զենք ունենալու և պաշտպանելու իր հեռափոխական իրավունքները»⁴:

Օրինագիծի քննարկումը ընթացակ երեք նիստով, կատարվեց ըստ հոդվածների երեք ընթերցում, և որոշ ուղղումներով այն ընդունվեց օգոստոսի 29-ի (11-րդ) նիստում, ձայների մեծամասնությամբ (Ըոլոմ' 20, դեմ' 9)⁵:

Հիմք ընդունելով այս օրենքը՝ ներքին գործերի նախարարը մի կարգադրություն արեց, ըստ որի յուրաքանչյուր շրջանում պետք է կազմվեին հատուկ հանձնախմբեր՝ առգրավելիք զենքն ու զինամթերքն ընդունելու և ցուցակագրելու համար: Առգրավման ենթակա չեն միայն ֆամիլիակալ չունեցող որսորդական հրացանները և սառը զենքը: Զինաթափման ժամանակ խուզարկությունն արգելվում էր: Զենքը կամովին շիանձնելու դեպքում պետք է գործադրվեին հարկադրական միջոցներ: Պարտապանցները պետք է վարչական կարգով ենթարկվեին կալանքի՝ մինչև երեք ամիս կամ տուգանքի՝ մինչև 3000 ոռւրու չափով⁶:

² Այս ձեռնարկումը հիշեցնում է մեր ժամանակներում՝ 90-ականների սկզբին, ՀՀ կատալուրության և Գերազույն խորհրդի այն միջոցառումները, որոնց շնորհիվ օրենքով լուծարվեց ԱԱԲ-ը և տարբեր ճանապարհներով հետ լիվնին առաջին անձանու ու սպառագին խմբերի ձեռքում հայտնված զենքն ու զինամթերքը:

³ Տես «Ժողովուրդ», 1918 թ. սեպտեմբերի 2:

⁴ «Ժողովուրդ», 1918 թ. օգոստոսի 29:

⁵ Տես «Ժողովուրդ», 1918 թ. սեպտեմբերի 5:

⁶ Տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918 – 1919 թթ.», մաս 1, էջ 2 – 4, «Ժողովուրդ», 1918 թ. սեպտեմբերի 12:

Ի լրումն այս օրենքի, 1919 թ. հունվարի 13-ին կայացվեց հետևյալ որոշումը. «Որպես պիտական գույք, գրավել, անկախ նրանց ձեռքբերման եղանակ-



Ս. Սահակյան,
առաջին խորհրդարանի նախագահ
(«Հուշապատում ՀՀ Դաշնակցության. 1890—1950»:
Բուստոն, 1950 գրքից)


ներից՝ թթերը, բերությները, ինչպիս նաև մոսկվի և լենինի հրացանների սվինները⁷: Սակայն առաջ անցնելով ասենք, որ այս օրենքը հետևողականորեն չկենսագործեց: Հետագայում էլ հանցավոր տարրերի ձեռքում մնաց զգալի քանակով առգրավման ենթակա զենք, որն էլ

⁷ Հայաստանի Հանրապետության պիտական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 200, ս. 1, գ. 86, թ. 22, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918 – 1919 թթ.», մաս 1, էջ 42:

միջոց էր դառնում զանազան քրեածին ու անխժանական գործողությունների համար:

Հայաստանի խորհրդարանն իր վերաբերմունքը ցուցաբերեց 1918 թ. աշնանը ծագած հայ-վրացական սահմանային վեճին: Խորհրդարանն իր սխա-

րալար տարածքային-սահմանային վեճը, և Հայաստանի ու Վրաստանի միջև, մի քանի նոտաների փոխանակումից հետո, 1918 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին տեղի ունեցած երկշաբաթյա պինարախում: Չնայած ձայների մեծամասնությամբ խորհրդարանը հավանութ-



Լ. Շանթ (Երկրորդ խորհրդարանի փոխնախագահ) և Հ. Քաջազնունի
(ՀՀ վարչապետ, 1918 թ. հունիս - 1919 թ. փետրվար)

(Ա. Բարայան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից: Կահիրն, 1959 գրքի)

տերում մի քանի անգամ անդրադարձավ այդ խնդրին: Երկրի սահմանների պաշտպանությանն ուղղված քայլերի մասին վեկուցում տվեց և պատգամավորների հարցերին պատասխանեց Վարչապետ Հ. Քաջազնունին: Հոկտեմբերի 26-ին կայացած 31-րդ սիստում, հայ-վրացական կնճիռը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով, խորհրդարանը ձայների մեծամասնությամբ (27 ձայնով) հանձնարարական տվյալ կառավարությանը բանակցություններ սկսելու վրաց կառավարության հետ՝ սահմանագիծը որոշելու համար⁸: Սակայն խաղաղ քաղաքական միջոցներով հնարավոր չեղավ լուծել Լոռի - Ախա-

յուն էր տվել կառավարության վարած քաղաքականությանը, սակայն այնտեղ բացորդ ի հայտ եկան երկու հակադիր հոսանք: Ազգային թևը՝ ՀՀԴ և ՀԺԿ իրմակցությունները, կառավարությունից պահանջում էր ավելի վճռական քայլեր, իսկ ոչ ազգային՝ ձախակողմյան, իրմակցությունները, հանդես գաղով պատերազմների մերժման պացիֆիստական դիրքերից, հավաարապիս ըննադատում էին Հայաստանի և Վրաստանի կառավարություններին՝ գտնելով, որ հարցի ուժային լուծումն անթույլատրելի է: «Նայինսալիստական կրթերը, —գրում էր Արկումենը (Ղարաջան), —մեզանում բորբոքման այն աստիճանի են հասել, որ մի «Կորերի» (կիսակայարան Լոնիում:—Ա. Հ.) կամ «Շահալուի» խնդիրը

⁸ Տես «Հորիզոն», 1918 թ. նոյեմբերի 10, «Բաւթեր Հայաստանի արխիվների», 1990, հ. 3, էջ 129:

կարող է նորեն տակնուվիրա անել մեր երկիրը և վտանգել մասնավորապես հայ ժողովրդի գոյությունը⁹: Ըստ մենշևիկ գործիչների ստացվում էր, որ բնիկ հայկական և գերազանցապես հայարևակ Լոռու և Ախալքալաքի հայության օրինական շահերի ու անվտանգության պաշտպանությունը և Վրաստանի զավթողական ձգտումներին արգելափակոց դնելլ հայերի ապօայնամոլության դրսելում են ու հավասարարժեք են վրացականին:

Արդեն ընթացող ռազմական գործողությունները դադարեցնելու և վիճած հակամարտությունը հարթելու նպատակով Լոռի մենքնեց խորհրդարանական հանձնաժողովը: Նրանում ընդգրկված էին ժողովրդական Գ. Տեր-Խաչատրյանը, դաշնակցականներ Ս. Հարությունը և Ս. Խաչատրյանը, անկուսակցականներ Ս. Մամիկոնյանը և գրավար Գ. Ղորդանյանը¹⁰: Պատվիրավությունը, անջուշու, դրական դեր խաղաց արյունահենության շուտափույթ դադարեցման գործում:

Ապօային և ոչ ապօային կուսակցությունները խորհրդարանում հակադիր մոտենալու էին ցուցաբերում հայկական ուժեղ բանակ ունենալու խնդրին*: «ՀՀ և ՀԺԿ խմբակցությունները, հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքարագրական դիրքը, ոչ միայն արտահայտվում էին ուժեղ բանակ ունենալու օգտին, այլև բոլոր հնարավոր միջոցներով օժանդակում էին դրան: Սրան հակառակ՝ «Ճախակողմյան» խմբակցությունները, պատճառաբանելով ժողովրդի նյութական, սոցիալական ծանր պայմանները, ուղղակի դեմ էին քվեարկում բանակի համար ֆինանսական հատկացումներին: Ահա թե ինչ էր գրում «Խորքում» մենշևիկ Հ. Ազատյանը. «Ժողովուրդը քաղաց է, կուրկ աշխատավոր ձեռքերից, իսկ նրա

պառամենտը հնարավոր է համարում ինչ-ինչ նպատակների համար 16 հազար մարդուց բավկացած կորք պահել, ամսական նրա վրա մոտ յոթ միլիոն ոռուբի ծախսելով: Մեր կորքի բանակն ու նրա վրա արված ծախսերը Հայաստանի համար ոչ թե շրայլություն պետք է համա-



Ս. Խաչատրյան, ՀՀ վարչապետ
(1919 թ. փետրվար – 1920 թ. մայիս)
(Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն,
Փարիզ, 1928 գրքից)

թել, այլ ժողովրդի շահերի դեմ ուղղված մի անորակելի հանցանք»¹¹:

Ինչո՞ւ էին «Ճախերը նման բացասական վերաբերմունք ցուցաբերում բանակի խնդրում: Նրանք գտնում էին, որ պիտական միջոցները պետք է ծախսել պարենավորման գործի վրա և ոչ թե ռազմական¹²: Ավելին՝ Հ. Ազատյանը պահանջում էր սատ էռթյան յրել կորքը և դրա փոխարեն մտցնել այսպես կոչված ժողովրդական միլիոնայի համակարգ:

Զախակողմյան խմբակցությունների առաջարկությամբ 1919 թ. հունվարի 7-ին Խորհուրդը օրենք ընդունեց հայկական բանակի մասնակի գործության բանակի կազմավորումը (1918 – 1920): «ՔԲ», 1995, հն. 5 – 6 (ինչպես նաև նույն համարի ներդիրը): Խմբ.:

⁹ «Կայձ», 1918 թ. նոյեմբերի 9:

¹⁰ Տես «Ժողովուրդ», 1918 թ. դեկտեմբերի 22:

* Բանակի կազմավորման ընթացքի մասին տես U. L. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումը (1918 – 1920): «ՔԲ», 1995, հն. 5 – 6 (ինչպես նաև նույն համարի ներդիրը): Խմբ.:

¹¹ «Կայձ», 1919 թ. հունվարի 22:

¹² Տես «Կայձ», 1918 թ. փետրվարի 13:

բարձր տարիք ունեցող զինվորները պորապրվում էին¹³: ՀՀԴ և ՀԺԿ խմբակցությունները համաձայնեցին դրան այն նկատառումով, որ թուրքական զորքը հետ էր քաշվել, հայ-վրացական պատերազմն ավարտվել էր և այդ ժամանակ Հայաստանին իրական լուրջ վըտանգ չէր սպառնում:

Ռազմաքաղաքական և պաշտպանական հարցերի քննարկման կազմակցությամբ հաճախ հրավիրվում էին խորհրդակցությունների: Այդպիսի մի խորհրդակցություն տեղի ունեցավ 1919 թ. մարտի 16—18-ը¹⁴: Այսուղի լսեց ՀՀ կառավարության նախագահի պաշտոնակատար Ա. Խատիսյանի զեկուցումը՝ «Հայաստանի սահմաններին սպառնացող վտանգի և զորքի անվազմակերպ վիճակի մասին», և որոշվեց լրացուցիչ 10 մլն. ռուբրու վարկ հատկացնել բանակի վերակառուցման և փորացման համար: Բայց, երկրի պաշտպանության խնդիրների լրջումն արագացնելու համար կառավարությանը տրվեցին լայն իրավունքներ¹⁵:

Այս խորհրդակցության հրավիրման նախաձեռնողն ու նրանում տոն տվյալը ՀՀԴ խմբակցությունն էր: Երկրի պաշտպանության ամրապնդման և զորքի վերակառուցման մասին ՀՀԴ խմբակցության կազմած որոշման նախագիծն էլ հենց լրվեց խորհրդակցության աշխատանքի հիմքում: Խորհրդակցությունում ՀՀԴ խմբակցության բանաձևը պաշտպանեց ՀԺԿ խմբակցությունը, իսկ առցիալ-դեմոկրատները և էսենները մերժեցին երկրի պաշտպանության ամրապնդմանն ուղղված ձեռնարկումները: Վերջիններս ցուցաբերաբար հեռացան խորհրդակցությունից¹⁶: Այս պարագաներում ևս երեսաց այս կամ այն կուսակցության և նրա ընդդիմության պատասխանատվության չափը: Հասկանալի է,

որ «Ճախ» ընդդիմության դիրքորոշումը չէր ծառայում հայրենիքի պաշտպանության շահերին: Խմբակցությունների միջև առկա նման հակասություններն ավելի ու ավելի էին խորացնում խորհրդարանի գգնաժամանը:

ՀՀ իշխանություններն զգալի ուշադրություն էին դարձնում զինվորների և սպայակազմի գաղափարաքաղաքական կոփմանը: Որքան էլ այսօր տարօրինակ հնչի, առաջին հանրապետության օրոք բանակը չէր մասնակցում իշխանության մարմինների ընտրություններին: Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքով՝ խկական զինվորական ծառայության մեջ գտնվողները ընտրություններին մասնակցելու իրավունք չունեին¹⁷: Նույն կերպ էլ խկական ծամկենային ծառայության մեջ գտնվողները գործ էին նաև զեմստվյալկան և քաղաքային ինքնափառության մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքից¹⁸: Սա արփում էր բանակը տպակուսակցականացնելու և զինվորականներին քաղաքական պայքարից հեռու պահելու նպատակով: Նման ընտրակարգ մոցնելս, մասնավորապես, հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ 1917—1918 թթ. ռուսական զորքի քայրայման ու կազմալուծման գործում զգալի դեր էր խաղացել զինծառայողներին ընտրական իրավունք տալու և ընտրապայքարին մասնակից դարձնելու հանգամանքը:

Բանակի առաջնահերթ խնդիրներից էր հաղորդակցության լեզվի հայերենացումը: Դեռ 1919 թ. մայիսին կառավարության նախաձեռնությամբ մշակվել էր լեզվի մասին օրինագիծ¹⁹, որով հոչակառում էր, որ հանրապետության սահմաններում պետական-պաշտոնական լեզուն հայերենն է: Բանն այն է, որ հանրապետությունում գործակարությունը տարվում էր մեծ մասամբ ռուսե-

¹³ Տես «Կայճ», 1919 թ. հունվարի 30:

¹⁴ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 199, գ. 1, գ. 27, թթ. 193—194:

¹⁵ Տես նույն տեղում, թ. 194:

¹⁶ Տես նույն տեղում:

¹⁷ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 404, գ. 1, գ. 62, թ. 1, «Ժողովուրդ», 1919 թ. մայիսի 4:

¹⁸ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 199, գ. 1, գ. 14, մաս 1, թ. 127:

¹⁹ Տես նույն տեղում, թթ. 125—126:

բնով: «Մինհատրություններից պաշտոնատներում, —մըտահոգ գրում էր «Զանգը», —իշխողը ոռւսերենն է. գրականությունը ոռւսերեն, խնդիրները ընդունվում են ոռւսերեն, պատասխանները տալիս՝ ոռւսերեն: Խակ, օրինակ, վինվորական նախարարության մեջ հայերեն լեզուն ուղղակի հալածված է»²⁰: Համեմատության կարգով ուզում ենք նշել, որ նման խրնդիր գոյություն ունի (իհարկե, ոչ սուրձնով) նաև այսօրվա մեր բանակում: Քանի որ լեզվի մասին օրինագիծն ուներ լրամշակման կարիք և, բայց այդ, առաջին խորհրդարանը շուտով՝ 1919 թ. հունիսի 5-ին, արձակվեց, ուստի օրենքն ընդունվեց արդեն երկրորդ խորհրդարանում՝ 1919 թ. դեկտեմբերի 26-ին, խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթի վավերացմամբ: Այս օրենքով հայերենը որպես պիտական լեզու պարտադիր էր դառնում բանակում, բոլոր պիտական ու հասարակական հիմնարկություններում ու հաստատություններում: Պետական և հասարակական բոլոր հաստատությունները պարտավոր էին վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պաշտոնական գործադրության լեզու²¹: Նույնիսկ պահանջ դրվեց, որ ոռւսաց լեզվով գրություններին չպետք է արձագանքել և պատասխաննել²²:

Ի կատարումն «Պետական լեզվի մասին» օրենքի՝ բանակում հայերենը արմատավորելու և միակ պաշտոնական լեզու դարձնելու նպատակով նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի հրահանգով ոչ ուշ բան մինչև նույն թթվականի օգոստոսի 1-ը վինվորական նախարարության համակարգում գրագրությունը և գործադրությունը պիտի տարվեր միայն հայերենով: Խակ հայագի այն սպաները, ովքեր չեին տիրապետում մայրենի լեզվին, սույն հրահանգով պետք է անմիջապես ակսեին սովոր-

րել իրենց մայրենի լեզուն: Արգելվում էր այսուհենուն վինվորական նախարարության համակարգում ծառայության վերցնել հայոց լեզվին չտիրապետող անձանց²³: Բացառություն էին կազմում միայն նրանք, ովքեր իրենց հատուկ մասնագիտական գիտելիքներով ու պատրաստվածությամբ տվյալ ժամա-



Ա. Շավրոյան,
երկրորդ խորհրդարանի նախագահ
(Ս. Վասցան, Հայաստանի Հանրապետություն,
Փարիզ, 1928 դրից)

նակամիջոցում անհրաժեշտ էին հայոց բանակին: Այդուհանդեռ, մի քանի ամսվա ընթացքում վինվորական ծառայությունների պաշտվեցին և բանակից զորացրվեցին 81 օտարազգի սպաներ ու աստիճանավորներ²⁴: Սակայն, կարծում ենք, այդպիսի քայլը տվյալ ժամանակաշրջանում (թուրք-հայկական պատերազմի նախօրեին) արդարացված չէր: Ի դեպ, վինվորական նախարարությունն ինքը ոչ պաշտոնապես կանգնեցրեց այս հրահանգի կատարումը:

Առաջին խորհրդարանը չուներ

²⁰ «Զանգ», 1919 թ. հունվարի 24:

²¹ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, գ. 1, գ. 333, թ. 30, «ՀՀ պաղամեննուի օրներները (1918—1920 թթ.)», Ե., 1998, էջ 209:

²² Տես նույն տեղում, ֆ. 203, գ. 1, գ. 116, թ. 38:

²³ Տես Մ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը (1918—1920): Ե., 1996, էջ 76:

²⁴ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 147, թ. 189:

պաշտպանության ու բանակի հարցերով վրադլող առանձին հանձնաժողով, և այդ խնդիրներով վրադլում էին օրենսդրական և ֆինանսական հանձնաժողովները: Բայց երկրորդ՝ ընտրութիւն, խորհրդարանն ուներ 8 անդամից կազմը վաճ վիճակի հանձնաժողով՝ Ռ. Տեր-Մինասյանի նախագահությամբ²⁵:

Խորհրդարանն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց պատերազմում գոփածների ընտանիքներին օգնելու գործին: Այս կազմակցությամբ ուշագրավ ենք համարում հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբայանի կողմից 1919 թ. սեպտեմբերի 29-ին, իմ. 2956 գրությամբ, խորհրդարան ներկայացված «Հայաստանի պատագրության կովկում գոփած վիճակիների կավակներին անվճար դպրոցական պիտույքներ բաժանելու մասին» օրինագիծը: Այս օրինագծում ասվում էր.

«1. Ակտած 1919 թ. սեպտեմբերի 1-ից պիտական գանձարանի հաշվին ձրի դպրոցական պիտույքներ մատուկարարել այն բոլոր դպրոցականներին, որոնց ծնողները զոհ են գնացել Հայաստանի պատագրական պայքարին՝ սկսած 1914 թ. սեպտեմբերի 1-ից:

2. Հիշյալ պիտույքները մատուկարարել կամավորների, սպաների, բժիշների և գրության բույրերի զավակներին:

3. Հիշյալ նպաստի գործը հանձնարարել հանրային կրթության և արվեստի նախարարությամբ՝ այդ նպատակի համար տրամադրելով նրան 200 հազար ռուբլի²⁶:

Խորհրդարանի դպրոցական-կրթական համաձայնաժողովը ըննեց այդ նախագիծը, և որոշ փոփոխություններից ու ձգձգումներից հետո այն հաստատվեց²⁷: Ի կատարումն այս օրների՝ խորհրդարանն ընդունեց մեկ այլ օրներ, որով 1919—1920 ուսումնական տարում վերոհիշյալ կարգախմբի դպրոցական երեխաներին պետության հաշվին ան-

վճար գրենական պիտույք հատկացնելու նպատակով բացվում էր 100 հազար ռուբլու վարկ²⁸:

Երկրորդ գործարման խորհրդարանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում բանակի ամրապնդման հարցերին: Դա երեսում է այն ֆինանսական հատկացնումներից, որ կատարել է խորհրդարանն իր գործունեության ընթացքում: Հանրապետության բյուջեական հատկացնումների ամենամեծ հոդվածը անտարակույս ռազմական ծախսերն էին: Երեսմն վիճակական նախարարության անունով վարկեր էին բացվում առանց վախահաշվների: Այսպես, օրինակ, 1919 թ. սեպտեմբերի 6-ին ընդունված օրենքով վիճակական նախարարության անունով նախահաշվից դուրս բացվեց 11,7 մլն. ռուբլու վարկ համար կողմիներ գնելու նպատակով²⁹: Անգլիացիներից 600 չորի, 150 սայլ և վիճակական հանդերձանք գնելու համար խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 30-ի օրենքով վիճակական նախարարությանը բաց թողնվեց 12 մլն. ռուբլի³⁰: Որոշ ժամանակ անց բանակի պարենավորման և բանող ուժի կերպման համար նախարարությանը հատկացնեց 9,2 մլն. ռուբլի³¹: Արդեն 1920 թ. գարնանը բանակի համբարակային կարիքների համար բացվեց 85,4 մլն. ռուբլու վարկ³²: 1920 թ. ապրիլին վիճակական նախարարության հոդվածով (հաշվեհամարով) բաց թողնվեց 35,6 մլն. ռուբլու վարկ³³: Նույն ամսին նախարարների խորհրդի արտակարգ քաղաքական ծախուերի համար (այսպիսս է հիմնամուրված օրենքով) բացվեց շուրջ 40 մլն. ռուբլու վարկ³⁴:

²⁸ Տես նույն տեղում, թ. 73, «ՀՀ օրենքների հավաքածու», 1920 թ., էջ 7:

²⁹ Տես «ՀՀ ՊԿՊԱ, թ. 200, ց. 1, գ. 86, թ. 41, «ՀՀ օրենքների հավաքածու», 1919 թ.», էջ 4, «ՀՀ պատվաստի օրենքները (1918—1920 թթ.), էջ 169:

³⁰ Տես «ՀՀ պատվաստի օրենքները (1918—1920 թթ.), էջ 168:

³¹ Տես «ՀՀ ՊԿՊԱ, թ. 200, ց. 1, գ. 86, թ. 72:

³² Տես «ՀՀ օրենքների հավաքածու», 1920 թ., էջ 52—53:

³³ Տես «ՀՀ ՊԿՊԱ, թ. 202, ց. 1, գ. 333, թ. 159:

³⁴ Տես նույն տեղում, թ. 160:

Ֆինանսական հատկացումներ էին կատարվում ոչ միայն բանակի կերպարման ու հանդերձավորման, այլև, դրսից կախում չունենալու նպատակով, ուստի մամթերքի սեփական արտադրության կազմակերպման ուղղությամբ: Այսպես՝ 1919 թ. սպատիմբերի 16-ի օրենքով մարտական գնդակներ պատրաստելու և փամփուշտներ լցնելու արհեստանոց հիմնելու համար բացվեց 6 մին. ոռուբրու վարչի³⁵: Խոկ մենք այլ՝ հոկտեմբերի 3-ի օրենքով Ալեքսանդրապոլի հրանոթային արհեստանոցների կազմակերպման ու կահավորման համար կառավարության խնդրանքով խորհրդարանը որոշեց հատկացնել 2 մին. 172 հազար ոռուբրի³⁶:

Բանակի վորացմանն ուղղված հատկացումներին ոչ բոլոր խմբակցություններն էին համաձայն: Այսպես՝ Էսեռական խմբակցությունը որպես կանոն ձեռնպահ էր մնում և չէր մասնակցում քիեարկություններին³⁷: Եթե, ասենք, հայոց բանակին ուղղմական վարկեր տրամադրելու հարցի քննարկման ժամանակ թուրքական խմբակցությունը չէր ներկայանում նիստին կամ դեմ էր քիեարկում, դա ինքնին հավանալի է, իսկ ի՞նչ անուն տալ ինտերնացիոնալիստ հայ էսեռների խմբակցության նման վարքագծին:

Աղիտալի տեմպերով դրամի արժեքը կման պայմաններում արդեն 1920 թ. երկրորդ կիսամյակում զինվորական և ախարաբության գիսավոր համբարձային վարչության համար հատկացված և ախահաշիվը կազմում էր շուրջ 2,4 մլրդ. ռուբլով վարկ³⁸:

Հանրապետության վիճակը ուժեցին, խորհրդարանական հատկացումներին պուգածեն, նյութական օգնություն էին ցույց տալիս նաև առանձին կուսակցություններ և անհատ բարերարներ։ Կուսակցական ուղիներով կամ անհատական կարգով կատարվող այս

գործում առավելապես աշքի էին ընկնում Հայ սահմանադիր ռամկավարների արտասահմանյան կազմակերպությունները: 1919 թ. փետրվարին Պոլսս Նուբար փաշան հայկական պորքի կարիքները հոգալու նպատակով տրամադրեց 502.270 ֆրանկ³⁹: Միաժամանակ սեփական միջոցներով նա գննեց մեկ հինգա-



Ո. Տեր-Մինասյան, խորհրդարանի
վկինգորական համալսարադուին Նախագահ,
հետագարում՝ վկինգորական Նախարար
(*Ա. Վրացյան*, Հայաստանի Հանրապետություն,
Փարիս, 1928 գրքից)

թիո հայկական քանակի համար: 1920 թ. մայիսին, Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձի առթիվ, հգիպուտահայ մեծահարուստ Ղարիբ Գառնուկը նույնպես նվիրեց Հայաստանին մեկ ինքնարքին⁴⁰: Թեև ռամկավար կուսակցությունը քննադատում էր դաշնակցական կառավարությանը և շատ հարցերում համաձայն չէր նրա վարած քաղաքականությանը, բայց դա ամեննին չէր խանգարում, որ նա անհրաժեշտության դեպքում օգնի ու աջակցի հայոց պետականության ամրապնդմանը: Պետք է ասե, որ հիմնականում ադդաեն էին մտա-

³⁵ Տես նույն տեղում, թ. 9:

³⁶ Տե՛ս «Հօհնքների հավաքածու, 1919 թ.», էջ 22–23:

³⁷ Տե՛ս «Սոցիալիստ հեղափոխական», 1919 թ. իուլիսի 9:

³⁸ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ս. 1, գ. 58, թ. 68:

³⁹ Տես Առաջն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 31:

⁴⁰ Տես նույն տեղում, ֆ. 200, ս. 1, գ. 576,

ծում ու գործում նաև մյուս հայկական տպգային կուսակցությունները:

Հայ սահմանադիր ռամկավար կուսակցության Եզիպտոսի շրջանային կենտրոնական խորհուրդը 1920 թ. ամռանը որոշեց գննել 50 մարտական ինքնաթիռ, որոնցից 10-ը նախատեսվում էր հատկացնել Կիլիկիայի ինքնապաշտպա-

կը՝ «Հայ ռամկավարների օդային տորմիոր»⁴³:

Բայց մինչ հայ սահմանադիր ռամկավարներն այս հայրենասիրական խնդիրներով էին վրադած, Հայաստանի ճակատագիրը փոխվեց: Այն բանից հետո, եթե Հայաստանը խորհրդայնացավ, անգլիական իշխանությունները



Երևանի կամավորական շուար. աջից ստացինը՝ Ն. Ալբաղյան: 1918 թ.
(Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. Գ: Թերյութ, 1963 գրին)

նությանը, իսկ 40-ը՝ Հայաստանի Հանրապետության վիճակած ուժերին⁴¹: Միաժամանակ ծրագրվեց պատրաստել 50 օդաչու: Այս խնդիրն իրենց վրա վերցրին սահմանադիր ռամկավարների Ամերիկայի և Իզմիրի կազմակերպությունները⁴²: 1920 թ. օգոստոսին ինքնաթիռների խմբարանակի գնումը Եզիպտոսի անգլիական վիճական իշխանություններից արդեն ավարտվել էր, և մասում էր դրանց փոխադրումը հայրենիք: Հիշալ ինքնաթիռները պետք է անվանվեին դրանց գնող-նևիրատունների անուններով, իսկ ամբողջ խմբարանա-

այլն թույլ չտվեցին, որ գնված ինքնաթիռներն ուղարկվեն Հայաստան:

Պաշտպանության ու բանակի խընդիրներում խորհրդարանի գործունեությունը չէր սահմանափակվում միայն ռազմական վարկերի տրամադրմամբ: Խորհրդարանի հանձնարարությամբ տարբեր շրջաններ էին գործուղիում առանձին պատգամավորներ կամ պատգամավորական հանձնախմբեր, որոնք տեղիրում կատարում էին ուսումնասիրություններ և համապատասխան առաջարկություններ ներկայացնում խորհրդարան ու կառավարություն: Նման հանձնաժողովներ էին գործում Կարսում, Նոր Բայազիտում, Դիլջանում, Դարալագյազում, Էջմիածնում, Սուրմալուում և այլուր: Նրանց ուսումնասիրու-

⁴¹ Տես «Ժողովրդի ձայն» (Կ. Պոլիս), 1920 թ. օգոստոսի 15:

⁴² Տես Մ. Գ. Ճիզմեջյան, Պատմություն ամերիկական քաղաքական կուսակցության, 1890—1925: Ֆրեզոն, 1930, էջ 412:

⁴³ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 2, թ. 1:

թյունների դաշտում էին գտնվում մասնավորապես պաշտպանության ու փորձի խնդիրները: Այսպես, օրինակ, 1920 թ. հունվար-փետրվարին Կարսում գտնվող խորհրդարանական հանձնախումբը քանակի մասին ներկայացրեց գործական առաջարկներ՝ ուղղված վիճուների, պահեստայինների ու նրանց ընտանիքների նյութական պայմանների բարելավմանը, դասալքության կանխմանը և այլն⁴⁴:

1920 թ. բոլշևիկների մայիսյան խոռվության շրջանում Դիլիջան գործուղված պատգամագիր Արշակ Հովհաննիսյանի միջնորդությամբ Դիլիջանի գորամասի հրամանատար Նշանակվեց տաղանդավոր զորագար Սենյուկը⁴⁵: Սակայն պետք է ասել, որ խորհրդարանական հանձնախմբների ներկայացրած առաջարկություններն ու եկրակացությունները մի շաբթ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մեծ մասամբ հաշվի չէին առնվում: Արձանագրվել են դեպքեր, երբ ժամանակին հաշվի չեն առնվել հանձնախմբի օգտակար առաջարկություններն ու դիտողությունները, ինչը հետագայում ունեցել է բացասական հետևանքներ: Օրինակ՝ հայտնի է, որ ռազմավարական նշանակություն ունեցող Կարսի շրջանում ստեղծվել էր անսուռղ մթնոլորտ տեղի վիճուրական հրամանատարության և քաղաքացիական իշխանությունների միջև: Զմոն ամիսներին Կարսում գործող խորհրդարանական հանձնաժողովը ներկայացրեց այդ կապակցությամբ բարեփոխումների առաջարկություններ, որոնք հավանաբար ինչպես հարկն է հաշվի չէին առնվել ու կիրառվել: Եվ ահա մայիսյան դեպքերի (ապատամբության) շրջանում

Կարս գործուղված նոր խորհրդարանական հանձնաժողովը, տեսնելով շրջանի վիճուրական հրամանատարների՝ փորագարներ Հովհաննի ու Փիրումյանի և Նահանգապահն U. Ղորլանյանի միջև ստեղծված լարված հարաբերությունները, սուածարկեց փոխել եղած կազմը⁴⁶: Բայց մայիսյան ապստամբության ճշնշումից հետո, յավոր, բյուրո-կառավարությունը փոփոխություն չկատարեց տեղի վիճուրական ու քաղաքացիական իշխանությունների կազմում, ինչն էլ ամենակած իր բացասական դերը խաղաց բյուրօ-հայկական պատերազմի ընթացքում:

Այսպիսով՝ փաստերի ուսումնասիրությունը մենք քերում է այն հետևող թյան, որ, չնայած հանրապետության սուղ հնարավորություններին, տնտեսական կյանքի տեղապույտին, այնուամենայնիվ հանրապետության իշխանությունները, մասնավորապես խորհրդարանը, նկատի ունենալով ՀՀ առանձնահատուկ աշխարհաքաղաքական պայմանները, միջոցներ չեն խնայել մարտունակ բանակ ստեղծելու և հանրապետության սահմանները ամուր պաշտպանելու գործում: Պաշտպանություն ու բանակի ամրապնդման ուղղությամբ Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի գործունության ընդգրկումը եղել է բավական լայն: Սերորյա Ազգային ժողովը ևս նմանօրինակ հարցերում պետք է գտնվի օրենսդրի ու նաև քաղաքական մարմնի իր բարձրության վրա և ժամանակին նկատի ու լրացն Հայաստանի ու հայ ժողովորդի համար կինսական ուսպմագարական պրոբլեմները:

⁴⁴ Տես նույն տեղում, թ. 2 – 3:

⁴⁵ Տես «Ազգային անկախության միջացության համարական պերշին օրերը»: Ե., 1993, էջ 23:

**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՀԱՅԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

**Վ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գվարդիայի պաշտոնաթող փոխգնդապետ,
պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ**

Երբ 1944 թ. աշնանը խորհրդային գորքները մտան Բուլղարիա, հայ ժողովրդի ազգային-պատուագրական պայքարի ականավոր գործիշ Գարեգին Նըդդեհը, որն այդ ժամանակ ապաստան էր գտել այդ երկրում, կամավոր հանձնվեց խորհրդային իրամանատարությանը: Խնչվես հայտնի է, խորհրդային իրավապահ մարմինները քրեական գործ հարուցեցին Նժդեհի դեմ: Ի թիվս այլ մեղադրանքների (ինչպես, օրինակ, Զանգեզուրում 1919—1921 թթ. Նժդեհի գործունեության հակախորհրդային ուղղվածությունը*) նրան ներկայացվեց նաև գերմանական վարչակարգի հետ համագործակցելու համար մեղադրանք: Խսկ ի՞նչն էր դրդել Նժդեհին դիմելու այդ քայլին: Այս հարցին սպառիչ պատասխան տապր համար անհրաժեշտ է ուսումնասիրել Գարեգին Նժդեհի քառահատոր քրեական գործը, որը պահիվում է ՀՀ և ԱՍ նախարարության արխիվի կարճված գործերի ֆոնդում: Նրանում վետելված են Նժդեհի հարցաքննությունների արձանագրությունները: Այդ հարցաքննությունների ժամանակ Նըդդեհին հաճախակի տրիտ էր այն հարցը, թե որքանով էր ոնալ Եվրոպայում երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նոր հայկական ջարդերի կազմակերպման վտանգը և որն էր այդ սպառնալիքի կանխման գործում իր դերը: Ձե՛ որ այս հարցը սերտորեն կապված էր մի այլ հարցի հետ. ինչո՞ւ և ինչպե՞ս է Նժդեհը շփումների մեջ մտել գերմանական պաշտոնական մարմինների, այդ

* Նժդեհի այս գործունեության մասին հանգամանորեն տես Վ. Ա. Մուրադյան, Գարեգին Նըդդեհի կանգնելության մեծագործությունները: «ՀՀ», 1998, հմ. 3: Խմբ.:

¹ Տես ՀՀ և ԱՍ նախարարության արխիվ, կարճված գործերի ֆոնտ, քրեական գործ 11278 (այսուհետև՝ ՆԴ և ԱՍ արխիվ, ԿԳՖ, գ. 11278, ապա՝ համապատասխան հաստիք և թերթի նշումը):

թվում՝ նրանց գործակալական հետախուզության հետ:

Արխիվային փաստաթղթերը համովիչ կերպով վկայում են, որ ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, ըստիուաց մինչև 1944 թ. հոկտեմբերը, երբ Գարեգին Նժդեհը ձերբակալվեց խորհրդային պետանվտանգության մարմինների կողմից, նրա ողջ կյանքը ու գործունեությունը նվիրված էին հայ դատին, հայ ազգի ֆիվիկական գործության պաշտպանության գործին: Խսկ պատմական փաստերը վկայում էն, որ Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակման նախօրենին Եվրոպայում առաջ էր եկել հայկական ջարդերի սպառնալիք, ջարդեր, որոնք պետք է նմանակեն Լեհաստանի վրա Գերմանիայի հարձակման նախօրենին կազմակերպված հրեական ջարդերը:

Իր տված բացատրություններում Նժդեհը նշում էր. «Հայերը Բավկաններում և ընդհանրապես ամբողջ Եվրոպայում գերմանացիների կողմից անմիջական վտանգի էին ենթարկված: Ես հոգեբանորեն անկարոր էի գաղաքել հայերի ճակատագրով հետաքրքրվելոց: Գերմանական գլխավոր իրամանատարության ջրաներում և մամուլի օրգաններում հայերի հասցեին հնչող սպառնալիքների մասին հայտնի էր ինչպես արտասահմանաւում, այնպես էլ ԽԱՀՀ-ում:»

Եվ եթե խորհրդային հայությունը, հենվելով երկրագնդի վեցերորդ մասի վրա, ուժ գտավ արհամարիելու գերմանական սպառնալիքը, ապա արտասահմանյան հայերը, կուրկ լինելով որևէ քաղաքական հենարանից և մնալով բացարձակապես անպաշտպան, խուճապի մատնվեցին: Գերմանացիների արյունուտ ձեռքը դյուրությամբ կարող էր նըրանց մի բուռ մոխիր դարձնել, և ոչ մի տերության մտրով անգամ չէր անցնի:

գոնեն բողոք ներկայացնել: Առաջին աշխարհամարտի ժամանակից ի վեր հայերը լավ գիտենին, թե իրենից ինչ է ներկայացնում եվրոպական հասարակայնությունը»²:

Իր խոսքերը կոնկրետ փաստերով հիմնավորենու համար Նժդեհը քերում էր «Վիներ Տագերլատ» և «Ազգմայնն Ցայտունք» թերթերի մի շարք հակահայկական նլույթներ, որոնցում հայերը, սկսած պատերապմի տուաջին օրերից, ենթարկվում էին խիստ վարկարեկումների և արդարացվում էին 1915 թ. հայերի կոտորածները Թուրքիայում: Այնուհետև հիշյալ թերթերը, իսկ նրանց օրինակով նաև մյուսները սկսեցին պահանջել, որ գերմանացիները և նրանց երկրի պետական մարմինները հայերին վերաբերվեն նույն ատելությամբ, ինչպիսին ցուցաբերում էին հրեաների նկատմամբ:

Նժդեհը նշում էր նաև հետևյալ փաստերը: «Թուրքական ոսդիոն կենծ լուրեր էր իրապարակում այն մասին, որ իբր Երուսաղեմի հայոց պատրիարքը և Խորհրդային Հայաստանից ժամանած մի քահանա Սիրիայում կազմակերպում են կամավորական լեգեոններ, որոնք Խորհրդագների և անգլիացիների դրոշի ներքո պետք է կովեն գերմանական բանակի դեմ: Գերմանիայում պաշտոնապես հարց բարձրացվեց հայերի ոչ արիական ծագման մասին»³:

Շուտով բականյան երկրների թերթերի էջերում, ասեն Բնոլինից ստացված հրահանգով, սանձազերծվեց հակահայկական հիստերիա: Այդպիսի նյութեր սկսեցին տապագրվել նաև բուլղարական «Զարա», «Վոլյա» և այլ թերթերի էջերում: Նման մոլի հակահայկական տրամադրությունները չին կարող տագնապ չներշնչել Նժդեհին, որն այդ ժամանակ բուլղարահայկական մշակութային կոմիտեի փոխնախագահն էր: «Նման իրավճակում, —հարցաքննության ժամանակ ասել է Նժդեհը, —միջամտությունից իմ խուսափելը ոչ միայն արդարացվում չէր

² Նույն տեղում, հ. 1, թ. 32:

³ Նույն տեղում:

ունենա, այլև կիներ առնվազն փոքրոգության դրանորում:⁴ Եվ նա ատիպված է նղել կապի մեջ մտնելու գերմանական մարմինների հետ՝ հակահայկական կամպանիային վերջ տալու միտումով: Դա կատարվեց այսպիս:

Նժդեհը խորհուրդ հայցն իր վաղեմի բարեկամ, Բուլղարիայի ականավոր



Գ. Նժդեհ

(Ալո, Նժդեհ: Բնյութ, 1968 գրքից)

հասարակական գործիչ Սեմյոն Իվանովիչ Բուրեկից: Կերպիս առաջարկեց այս հարցի կապակցությամբ դիմել Սոֆիայում Գերմանիայի գեսապանությանը և բացատրել, որ հայերը պատկանում են արիական մարդացեղին: Նժդեհը, անսարք այլ խորհրդին, «Յնդակրոն» երիտասարդական կազմակերպության գըծով իր օգնական, Փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանի հետ այցելեց գերմանական հյուսպատուստրան, որտեղ նրանց ընդունեց հյուսպատության պատասխանատու աշխատակից դոկտոր Լևալդը: Վերջինիս պահանջով Նժդեհին ու Ասատրյանը գրեցին այս հարցի վերաբերյալ մի քանի վեկուցագրեր, սա-

⁴ Նույն տեղում, թ. 101:

կայն այդպիս էլ Լևարդից ոչ մի պատասխան չստացաւ։⁵

Իսկ երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա, հավահայկական կամպանիան ձեռք բերեց էլ ավելի սպառնալից բնույթ։ Ռայխի ռադիոհաղորդումներում ակսեցին հնչել այնպիսի նյութեր, որոնցում նշվում էր, որ հայերի 90 %-ը բնակվում է Գերմանիայի թշնամիների ապդեմության որորութում ընդգրկված տարածքներում, այդ պատճեռով նրանք բոլորն էլ համականը են տածում դեպի Ռուսաստանը, որը դարձել էր Գերմանիայի գլխավոր թշնամին։ Ուստի և գերմանացիները պետք է հայերին հավասարեցնեն իրեաներին և նույն չտփով ատեն նրանց։

Դա ավելի մեծ տագնապ առաջարեց բուզարահայկական կոմիտեում, որը Նժդեհի Նախաձեռնությամբ ձեռնամուխ եղավ ի պաշտպանություն հայերի մի հուշագրի պատրաստմանը, ինչը և արևելք շատ կարծ ժամկետում։ Հուշագիրն ստորագրեցին կոմիտեի նախագահ, պատմության պրոֆեսոր Գալիքիլ Կացարովը, փոխնախագահ Գարեգին Տեր-Հարությունյանը (Նժդեհ), բուզարական բանակի գեներալ Կոտոր Նիկոլովը, փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանը, Բուզարիայի պագային մողովի պատգամափոր Գեորգի Զենկովը, վաճառական Ներսես Աստվածատրյանը, գլուխարանատեր Գևորգ Կիրեմիջանը և ուրիշներ։

Հուշագրում նշվում էին հայերի արիական ծագումը և անսյարում նրանց մեծ ներդրումը մարդկային քաղաքականության վրա՝ կարգապես գործում։ Այս պարունակում էր նաև խնդրանք Հիտլերին՝ ձեռնարկելու միջոցներ, որ անհնարին դառնանան հայերի հետագա բռնագաղթեցումն ու կոտորածները, որոնք նրանց վիճակիցին նախորդ աշխարհամարտի տարիներին։⁶

Սուանալով այս հուշագիրը՝ Սոֆիայում Գերմանիայի Ներկայացուցչությունը և բուզարական իշխանությունները խորհուրդ տվեցին կոմիտեի անդամնե-

րից մեկին Բեռլին գործուղել։ Կոմիտեի որոշմամբ գործուղվեցին երկու հոգի՝ Նժդեհը և Բուրկը։

Սակայն նախրան Բեռլին մեկնելը Բուրկը հայտնեց Նժդեհին, որ Սոֆիա է ժամանել վերմախտի ներկայացուցիչը, որը կարող է օգտակար լինել այս հարցում, և կազմակերպեց նրա հետ հանդիպում իր բնակարանում։ Գերմանացին ներկայացավ որպես դոկտոր Դելիուս, թեև իրականում դա փոխգնդապետ Օտտո Վագներն էր՝ Բավարիաներում գերմանական հետախուզական և հավահետախուզական մարմինների ղեկավարը։

Նժդեհին այսպիս է բացատրել այն հանգամանքը, թե ինչու գերմանացիները հարկ են համարել բանակցելու իր հետ։ Ուշ հայ մորդվուրդը հայտարարելով գերմանատյաց՝ հիտլերականները համոզված էին, որ «հայերը կարող են գերմանացիների հետ մերձենալ միայն իրենց մահացու թշնամիների՝ թուրքերի դեմ գործելու նպատակով։ Ուստի և հիտլերականները հայերին առաջարկում էին համագործակցել իրենց հետ հակառարական ճակատում»⁷։

Բնիշների այն հարցին, թե ինչի մասին են վրույցել ինքն ու Դելիուսը, Նժդեհը պատասխանել է. «Ես Դելիուսին պատմեցի, որ հայերի շուրջ արհեստականորեն ստեղծվում է անսառող մքնուրուտ, որ դրան սաստար է կանգնած գերմանական մամուլը և այս ամենին արձագանքում է բուզարական մամուլը»⁸։

Երբ վրույցի ժամանակ Նժդեհը դիմել է Դելիուսին՝ «մեզ՝ հայերիս, օգնելու» խնդրանքով, վերջինս պատասխանել է, որ այդ հարցի կապակցությամբ ինքը պետք է մեկնի Բեռլին, և միննույն ժամանակ առաջարկել է օգնել գերմանացիներին իրենց գործակալական ցանցը հիմնելու Սուամբրուտմ, որտեղ մեծ թվով հայեր են բնակվում։ Գերմանիային անհրաժեշտ էին տվյալներ թուրքական բանակի մարտունակության, նրա բարոյանոգերանական վիճակի, թուրքիայի տնտեսության և նմանատիպ այլ հարցերի վերա-

